# ԱՊՐԻԼԻ 24-Ը
# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլ 24-ի առավոտյան ժամը 10.30-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բարձրաստիճան հոգևոր հայրերի, Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության, պաշտոնատար անձանց և Սփյուռքից ժամանած հյուրերի ուղեկցությամբ, Մայր Աթոռից ուղևորվեց դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ իր հարգանքի տուրքը և աղոթքը մատուցելու ի հիշատակ Մեծ եղեռնի անմեղ զոհերի:

Վերադառնալով Ծիծեռնակաբերդից, Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետը ներկա եղավ Մայր տաճարում Եղեռնի նահատակների 81-րդ տարելիցին մատուցվող Ս. Պատարագին՝ արարողությամբ Լոս Անջելեսից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Գերաշնորհ Տ. Տաթև արքեպս. Սարգսյանի:



Հավարտ սրբազան արարողության Գարեգին Ա. Կաթողիկոսը, շրջապատված հանդիսավոր թափորով, առաջնորդվեց դեպի Մայր Աթոռի շրջափակում Եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված հուշարձանը, ուր Նորին Սրբության բայ.-ր նախագահությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

Արարողությունից հետո հայ ժողովրդին իր Պատգամը տվեց Նորին Սրբություն Գարեգին Ա. Կաթողիկոսը: «Ապրիլ 24-ը, տարվան 365 օրերուն մեջ պետք է լինի մեր հոգենորոգության, ինքնամաքրման, ինքնազորացման օր, - ասաց Վեհափառ Հայրապետը: - Այս օրը մենք պետք է նայինք նահատակներու հայելիին մեջ՝ մեզի տեսնելու ոչ այնպիսին, ինչպիսին որ ենք, այլ այնպիսին՝ ինչպիսին պիտի՛ լինենք»:

Շարունակելով իր Պատգամը, Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ ստացել է Հայաստանից մեկ օր առաջ մեկնած Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գլխավոր Քարտուղար Դոկտ. Կոնրադ Ռայզերի հեռագիրը, որում Գլխավոր Քարտուղարը միասնություն ու համերաշխություն է արտահայտում իր Մեծ Ողբերգությունը սգացող հայ ժողովրդին: Դոկտ. Ռայզերը գրում է, որ 1997 թ. կայանալիք Եվրոպայի Եկեղեցիների երկրորդ Համագումարում բոլոր մասնակիցները պետք է վստահեցնեն, որ անելու են ամեն ինչ, որպեսզի նման արհավիրքներ այլևս չկրկնվեն:

Ավարտելով իր Պատգամը, Վեհափառ Հայրապետը հայ ժողովրդին մաղթեց իր հավատքի մեջ լինել հաստատուն, ցուցաբերել ամուր կամք՝ նորանկախ հայրենիքի պետականության կերտման նվիրական գործում:



**ԱՊՐԻԼ 24. ԷՋՄԻԱԾԻՆ, 1996 Թ.**

✵✵✵